Հաստատում եմ՝
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր Դ. Գյուրջինյան
«Մայիսի 7», 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Դավիթ Գագիկի Աքելյանի «Ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում» թեմայով Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՄՀՔ ֆակուլտետի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2026թ. մայիսի 6-ի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի ժ/պ, փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանը, ի.գ.դ., ք.գ.թ. Արմեն Հարությունյանը, փ.գ.թ., դոցենտ Գևորգ Հակոբյանը, փ.գ.թ., դոցենտ Լևոն Բաբաջանյանը, ք.գ.թ., դոցենտ Նարեկ Գրիգորյանը, ք.գ.թ., դոցենտ Մարգարիտ Պետրոսյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Գեորգի Միրզաբեկյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Արմեն Պետրոսյանը, բ.գ.թ., ավագ դասախոս Վահե Առաքելյանը, ավագ դասախոս Լուսինե Պողոսյանը:

Նիստի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, դրված էր Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 013 Փիլիսոփայության և սոցիոլոգիայի մասնագիտական խորհրդին հրապարակային պաշտպանության ներկայացված Դավիթ Գագիկի Աքելյանի «Ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում» թեմայով Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության քննարկումը:

Նիստի ընթացքում ելույթ ունեցավ ատենախոսության գրախոս փ.գ.թ., դոցենտ Գևորգ Հակոբյանը՝ ներկայացնելով նաև իր գրավոր կարծիքը: Ատենախոսության վերաբերյալ ելույթ ունեցան նաև Վ. Ասլանյանը, Լ. Բաբաջանյանը, Ա. Պետրոսյանը, Գ. Միրզաբեկյանը, Վ. Առաքելյանը, Լ. Պողոսյանը:

Դավիթ Գագիկի Աքելյանի «Ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում» թեմայով ատենախոսության քննարկման արդյունքում նիստի մասնակիցները ներկայացրին հետևյալ դիտարկումները և նկատառումները.

«Ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում» ատենախոսությունը նվիրված է ժամանակակից գիտության փիլիսոփայության և իմացաբանության կարևորագույն հիմնահարցերից մեկին՝ ֆալիբիլիզմի հայեցակարգային, մեթոդաբանական և աշխարհայացքային նշանակության վերլուծությանը: Աշխատանքի թեմայի արդիականությունը փաստում է գիտելիքի անսխալականության դասական իդեալների քննադատության, գիտական գիտելիքի վերանայելիության խնդիրների, ճշմարտության և օբյեկտիվության կարգավիճակի, ինչպես նաև հետճշմարտության և տեղեկատվական մանիպուլյացիաների պայմաններում գիտելիքի հիմնավորման հարցերի ներկայիս տեսական և գործնական կարևորությունը: Հեղինակը ֆալիբիլիզմը դիտարկում է ոչ թե որպես գիտելիքի թուլացման կամ հարաբերականացման հայեցակարգ, այլ որպես գիտելիքի հուսալիությունը, ինքնաքննադատական բնույթը և շարունակական բարելավման հնարավորությունը հիմնավորող իմացաբանական դիրքորոշում:

Ատենախոսության կարևոր արժանիքներից է այն, որ հեղինակը խնդիրը ներկայացնում է լայն պատմափիլիսոփայական և գիտափիլիսոփայական համատեքստում: Ֆալիբիլիզմի ակունքները դիտարկվում են անտիկ սկեպտիցիզմի, նոր շրջանի մեթոդաբանական կասկածի, Հյումի ինդուկցիայի հիմնախնդրի, ինչպես նաև Պիրսի և Փոփերի տեսական համակարգերի շրջանակում: Այս մոտեցումը ներկայացնում է ֆալիբիլիզմը ոչ թե իբրև պատահական կամ նեղ մասնագիտական դիրքորոշում, այլ գիտելիքի բնույթի վերաբերյալ երկարատև փիլիսոփայական քննարկումների տրամաբանական արդյունք և ունիվերսալ կիրառությամբ ստուգիչ գործիք: Հատկապես կարևոր է Պիրսի և Փոփերի հայեցակարգերի համեմատական վերլուծությունը, որի միջոցով հեղինակը ֆալիբիլիզմը ներկայացնում է որպես մի կողմից դոգմատիզմի, ֆունդամենտալիզմի և ինֆալիբիլիզմի, իսկ մյուս կողմից՝ ծայրահեղ սկեպտիցիզմի ու ռելյատիվիզմի, սահմանափակումները հաղթահարող չափավոր և ռացիոնալ դիրքորոշում:

Թեկնածուական ատենախոսության «Ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում» վերնագիրը ամբողջապես համապատասխանում է դրա բովանդակությանը և իրականացված հետազոտության բնույթին: Հետազոտության վարկածը, հիմնական նպատակներն ու խնդիրները, աղբյուրների տեսությունը, թեմայի գիտական

ուսումնասիրվածության աստիճանը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը հստակ են ձևակերպված:

Ատենախոսությունն աչքի է ընկնում գիտական նորույթով, որն էապես մեծացնում է աշխատանքի գործնական կիրառելիությունը, մասնավորապես՝

1. Հեղինակը չի սահմանափակվում ֆալիբիլիզմի պատմական նկարագրությամբ, այլ փորձում է բացահայտել դրա ներքին մեթոդաբանական ներուժը գիտության զարգացման, գիտական առաջընթացի, գիտելիքի հիմնավորման, օբյեկտիվության և ճշմարտության հիմնահարցերի համատեքստում: Ատենախոսությունում հիմնավորվում է այն միտքը, որ գիտելիքի սխալականության ընդունումը չի հանգեցնում ճշմարտության հնարավորության գաղափարի մերժմանը՝ ձևակերպելով ֆալիբիլիզմն իբրև գիտության շարունակական բարելավման և ինքնակատարելագործման մեթոդաբանական հիմք և բացահայտելով նրա կիրառական ներուժը:
2. Առաջադրված են մի շարք կարևոր դրույթներ, այդ թվում՝ գիտելիքի անսխալականության պայմանի գործնական անիրագործելիության, սուբյեկտիվության և օբյեկտիվության հակադարձ հարաբերականության, ինչպես նաև գիտելիքի կիրառման տիրույթի սկզբունքի վերաբերյալ: Այս դրույթները կարող են քննարկման հուսալի հիմք դառնալ ինչպես գիտության փիլիսոփայության, այնպես էլ ընդհանուր իմացաբանության շրջանակում: Դրանցից հատկապես ուշագրավ է այն մոտեցումը, ըստ որի՝ գիտելիքի արժեքը պետք է որոշարկել ոչ միայն դրա տեսական հիմնավորվածությամբ, այլև տվյալ համատեքստում դրա կիրառելիության, սահմանների և գործնական նպատակահարմարության հաշվառմամբ:
3. Հեղինակը ֆալիբիլիզմը կապում է ոչ միայն նեղ իմացաբանական խնդիրների, այլև արտաիմացաբանական՝ հանրային, կրթական, սոցիալ-քաղաքական և տեխնոլոգիական գործընթացների հետ: Այս տեսանկյունից աշխատանքը ձեռք է բերում գործնական կարևորություն՝ հատկապես հայաստանյան հանրային խոսույթի, քննադատական մտածողության մշակույթի, ինտելեկտուալ խոնարհության և բաց երկխոսության զարգացման համատեքստում: Ֆալիբիլիզմի նման մեկնաբանությունը կարող է օգտակար լինել ոչ միայն փիլիսոփայական հետազոտությունների, այլև կրթական և հանրային քաղաքականության մշակման համար:
4. Վերլուծելով անհրաժեշտ գիտելիքի, ֆորմալ-տրամաբանական համակարգերի բնույթը և անսխալական ճանաչողության խնդիրները՝ առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ մաթեմատիկական կամ այլ ֆորմալ համակարգերի անհրաժեշտ գիտելիքի գաղափարը չի ապահովում

գիտելիքի անսխալական բնույթը, քանի որ ճանաչողության իրական ու պրակտիկ գործընթացը միջնորդված է մարդկային ճանաչողական կարողություններով՝ պայմանավորվելով գիտելիքի տեսական ազդվածության, սարքային հարաբերականության, ճանաչողությունում սուբյեկտիվի լիարժեք դուրսմղման անհնարինության և այլ հիմնարար ճանաչողական սահմանափակություններով:

Ատենախոսության կառուցվածքի և բովանդակության ակնարկ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (ութ ենթագլուխներից), եզրակացությունից և գրականության ցանկից:

- **Ներածության** մեջ հիմնավորվել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական սկզբունքները, առաջադրվել են գիտական նորույթ պարունակող դրույթները, հիմնավորվել է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:
- Ատենախոսության *«Ֆալիբիլիզմի զարգացումը փիլիսոփայական ավանդույթներում»* վերտառությամբ **առաջին գլխում** վեր են հանվել ֆալիբիլիզմի՝ որպես իմացաբանական-էպիստեմոլոգիական հայեցակարգի ձևավորման և զարգացման պատմափիլիսոփայական հիմքերը, ներկայացվել է գիտության զարգացման համատեքստում դրա հայեցակարգային դերը: Առանձին և համադրական վերլուծությամբ քննարկված են անտիկ հունական փիլիսոփայությունից մինչև նոր ու նորագույն ժամանակներ ֆալիբիլիստական համակարգի կայացման հանգրվաններն ու անկյունաքարային դերակատարություն ունեցած մտածողների գաղափարական ներդրումը: Խորքային հայեցողական մոտեցմամբ պատկերվել են ֆալիբիլիզմի կայացման կոնտեքստը տարբեր հարացույցներում, տեսության հիմնավորող ականավոր փիլիսոփաներ Չարլզ Պիրսի և Կառլ Փոփերի առնչակից հայեցակարգերը, ինչպես նաև գիտական իրականության մեջ այս տեսության կենսականացումն ու որդեգրումը:
- **Երկրորդ գլխում** (*«Ֆալիբիլիզմը գիտության զարգացման արդի հիմնահարցերում»*) քննվում են գիտության փիլիսոփայության առանցքային հիմնախնդիրները՝ ճշմարտության, օբյեկտիվության, գիտության նպատակի, գիտելիքի հիմնավորման, գիտական առաջընթացի ու գիտության փոփոխության հիմնահարցեր, որոնք վերաիմաստավորվում են ֆալիբիլիստական իմացաբանական-մեթոդաբանության լույսի ներքո: Հիմնավորվում է այն դրույթը, որ ֆալիբիլիզմը թույլ է տալիս հաղթահարել

դասական իմացաբանության ջաստիֆիկացիոնիստական և ինֆալիբիլիստական սահմանափակությունները՝ առաջադրելով գիտելիքի հավանական սխալականության և դինամիկ օբյեկտիվության գաղափարները: Համակողմանի վերլուծության են ենթարկվում գիտության փոփոխության և առաջընթացի մրցակցող մոդելները, ինչպես նաև քննարկվում ֆալիբիլիզմի կիրառելիությունը արտաիմացաբանական տիրույթներում՝ այն դիտարկելով որպես սոցիալ-քաղաքական, կրթական և էթիկական ոլորտներում քննադատական մտածողության և հանրային առողջ երկխոսության իմացաբանական-մեթոդաբանական հիմք:

- **Եզրակացությունում** հստակ դրույթների տեսքով ընդհանրացվել են ուսումնասիրության հիմնական արդյունքները:

Արդյունքների հիմնավորվածությունը և գիտական արժեքը

Գնահատանքի է արժանի հայալեզու փիլիսոփայական գրականության տիրույթում գիտական կուռ աստառի վրա հյուսված այս աշխատության հրապարակումը, որն, անտարակույս, հիմք է հանդիսանալու ապագա ուսումնասիրությունների համար: Թեկնածուական ատենախոսությունում առկա են հեղինակ Դ. Աքելյանի կողմից կատարված եզրակացություններ, նախանշված են հանրային տիրույթի և գիտության ոլորտներ, որտեղ ֆալիբիլիզմը կարող է գտնել իր տեսական և գործնական կիրառությունը: Ատենախոսությունը անհրաժեշտ ձևաչափային փոփոխություններից հետո կարող է ծառայել որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերում դասավանդվող «Գիտության փիլիսոփայություն», «Իմացաբանություն», «Գիտական մեթոդաբանություն», «Գիտության զարգացման հայեցակարգեր» և հարանման դասընթացների համար, ինչպես նաև օգտագործվել գիտական, հասարակական, քաղաքական, կրթական և տեխնոլոգիական գործընթացների հայեցակարգային ուսումնասիրման և դրանց վերաբերյալ քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման համար:

Ատենախոսության աղբյուրաբանական և գիտական հենքը համապատասխանում է գիտական աշխատությանը ներկայացվող պահանջներին: Հետազոտությունը միջգիտակարգային բնույթ է կրում, ինչն արտացոլվում է նաև ուսումնասիրության հիմքում ընկած մեթոդաբանության մեջ: Ատենախոսը օգտագործել է պատմական, համեմատական, համադրական, կառուցվածքային-համակարգային վերլուծության և միջգիտակարգային մեթոդներ: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բնագրին: Ատենախոսն ունի թվով 8 գիտական հոդված, որոնցում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Մեկնաբանություններ և նկատառումներ

Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար առաջարկվող հետևյալ դիտարկումները՝

1. Ցանկալի կլիներ առավել որոշակիորեն տարբերակել ֆալիբիլիզմի իմացաբանական, մեթոդաբանական և էթիկա-քաղաքական կիրառությունները, որպեսզի ֆալիբիլիզմի արտաիմացաբանական կիրառման տիրույթը չթվա չափազանց լայն կամ վերացական:
2. Գիտելիքի կիրառման տիրույթի սկզբունքն (*Ենթագլուխ 2.2*) ինքնին ուշագրավ և խոստումնալից ձևակերպում է, սակայն հետագա հետազոտություններում կարող է պահանջել ավելի խիստ հասկացութային սահմանում և տարբեր գիտակարգերից քաղված օրինակների առավել մանրամասն մշակում:
3. Ատենախոսության առաջին գլխում նկատելի են խորագրերի և կառուցվածքային բաժանման խնդիրներ: «Փիլիսոփայական ավանդույթներ» եզրի ընտրությունը գլխի անվանման համար և այլ դրվագներում լրացուցիչ արդարացման կարիք ունի, կարող էին ընտրվել «փիլիսոփայական մտքի պատմության մեջ», «փիլիսոփայական ուսմունքներում» կամ այլ ավելի ճշգրիտ ձևակերպումներ: 1.4 ենթագլուխն իր վերնագրի և բովանդակության տեսանկյունից համընկնումներ է առաջացնում երկրորդ գլխի հետ, սա ևս կառուցվածքային կանոնավորության խնդիր է ստեղծում:
4. 1.3 ենթագլխում Փոփերի ֆալիբիլիստական հայեցակարգից բխեցվող արձանագրումները բավական ծավալուն պարբերություններում զուրկ են աղբյուրային վկայություններից, ինչը փիլիսոփայական դատողությունների ճշգրտությանը հետամուտ ընթերցողի համար նվազեցնում է սկզբնաղբյուրին հարազատության հուսալիությունը:
5. Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, գիտության փիլիսոփայության և արտաիմացաբանական ոլորտներում կիրառության հնարավորությունները՝ խիստ ցանկալի և խրախուսելի կլիներ աշխատանքից բխող ներդրման առաջարկությունների փաթեթի մշակումը հեղինակի կողմից՝ ոլորտների և համապատասխան գերատեսչությունների նշմամբ: Իբրև գործնական կիրառության օրինակ, հիրավի արժեքավոր ձեռքբերում կլիներ ասպիրանտական հետազոտության շրջանում հեղինակի կողմից կրթական որևէ գերատեսչության կամ հաստատության հետ իրականացված, ֆալիբիլիստական մեթոդաբանության ներդրումը ցուցադրող որևէ, թեկուզ կարճաժամկետ, նախագծի առկայությունը և դրա արդյունքների վերլուծությունը աշխատության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտարկումները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու շարադրանքի փոխկապակցված տրամաբանությունը, ատենախոսության փորձաքննության երկարին ուղին, հեղինակի գիտական պատրաստվածությունը, արդյունքներն ու եզրահանգումները՝ կարծում ենք, որ Դավիթ Գագիկի Աքելյանի «Ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ԲՊՀ Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2026թ. մայիսի 6-ի թիվ 7 նիստում:

Վարդան Ասլանյան
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի
Քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ժ/պ

«Փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանի ստորագրությունը հաստատում եմ»:

ԲՊՀ գիտական քարտուղար՝ Հասմիկ Փիլավջյան

Տեղեկություններ առաջատար կազմակերպության մասին.
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
Հասցե՝ ք. Երևան 0002, Թումանյան 42,
Հեռ.՝ (010) 522 020